26.382

ՍՍՀՄ ԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԱԳԻՏՄԱՍԲԱԺԻՆ

Հ.Ս.Ս.Հ. ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՐԱՆ
Ոչ. № 884
346-58(2)

ԳՈՐԾԱՐՔԸ ՅԵՎ ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

ԳԻՆԸ 15 Կ.

334.6
Կ-99

ՄՍԽԵԼԳԱՄԻ — ԹԻՖԼԻՍ
1931

Սախելգամի 1-ին տպարան
Գլեխանովի փող. № 91։
Գրառեպ № 1345։
Գատվեր 929։ Տիրաժ 3000։

334·6
Ա-99

15 JAN 2010

ԳՈՐԾԱՐՔԸ ՅԵՎ ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

(ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻՑ)

Գարնանային գյուղատնտ. կամպանիայի հանրագումարում Վրաստանում կոլեկտիվացված է չքավոր-միջակ տընտեսությունների 37,2%-ը, իսկ Վրաստանի բամբակաբուծական ռայոններում—45%-ը։ Այս հանդամանքն ասում է այն մասին, որ Վրաստանի գյուղացիության հիմնական մասսաներն ամուր շրջադարձ կատարեցին դեպի սոցիալիզմի ճանապարհը և, համոզվելով կոլեկտիվ աշխատանքի առավելությունների մեջ, բանվոր դասակարգի ղեկավարությամբ, ամուր և անդարձ կերպով կանգնեցին կապիտալիզմի վերջին մնացորդներն արմատախիլ անելու ճանապարհի վրա։ Այդ աջողությունները ձեռք են բերվել կուսակցության գլխավոր գծի հետևողական կիրառման, աջ թեքման, որպես գլխավոր վտանգի, և «ձախ» խոտորումների դեմ մղվող վճռական պայքարի, նույնպես և այդ յերկու տեսակ թեքումների հետ հաշտվողների դեմ մղվող պայքարի հետևանքում։

Կոլխոզային շինարարության ընագավառում ունեցած նվաճումները դնում են ամբողջ սրությամբ զոյություն ունեցող կոլխոզների ամրապնդման, նրանց արտադրական

18 SEP 2013

26.382

եֆեկտավորության բարձրացման հարցը և, կոլխոզային աշխատանքի առավելությունների գործնական ցուցադրության, կոլխոզային շարժման հետագա կազմակերպման հիման վրա, վորպեսզի 32 թվից վոչ ուշ կարելի լինի ավարտել համատարած կոլեկտիվացումը առանձնահատուկ նշանակություն ունեցող կուլտուրաների և տեխնիկական մշակույթների ռայոններում, վերացնելով, նրա հիման վրա, կուլակությանը, վորպես դասակարգի և ստեղծել անհրաժեշտ պայմաններ համատարած կոլեկտիվացմանն անցնելու համար նաև Վրաստանի մյուս ռայոններում։

Այս տնտեսական-քաղաքական խնդիրների լուծման մեջ վճռական և անհամեմատ ավելի կարևոր ողակներից մեկն է հանդիսանում աշխատանքի և հաշվառքի ճիշտ կազմակերպումը կոլխոզներում։

Խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները կոլխոզային շինարարության հարցի վերաբերմամբ սրում են ուշադրությունը հատկապես աշխատանքը ճիշտ կազմակերպելու և գործարքի սկզբունքները բոլոր կոլխոզներում կյանքի մեջ անցկացնելու վրա։

Կազմակերպելով ընտրովի հետազոտություն մի շարք ռայոնների կոլխոզներում գործարքին անցնելու դրության մասին, Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը նշում է, վոր խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները կոլխոզային շինարարության մասին և, մասնավորապես, գործարքին անցնելու վորոշումն ընդունվեց կոլխոզային լայն մասսաների կողմից մեծ գոհունակությամբ, վորպես աշխատանքի կազմակերպման անհամեմատ ավելի լավ մեթոդ և կոլխոզների տնտեսական ամրապնդման լավագույն ուղի։

Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը նշում է, վոր այն ռայոններում և այն կոլխոզներում, ուր մանրամասն մշակված էին 6-րդ համագումարի վորոշումները և ապահովված եր [illegible] նելու գործնական և ամ-

ՀՍՍՌ ԳԻՏ.ՍՍՌ
43147-63

նորյա ղեկավարությունը, կոլխոզնիկները ցույց էին տալիս լավագույն կարգապահության որինակներ, ներքին կարգի, աշխատանքի արտադրողականության, կտրուկ բարձրացման և այլն կանոնները ճիշտ պահպանելու մտքով։ Հատկապես իրոք գործարքին անցնելու հետևանքով մի շարք կոլխոզներում գարնանային գյուղատնտեսական կամպանիան անցնում եր աշխատանքի արտադրողականության զգալի աճի, դաշտային աշխատանքների ժամանակամիջոցների կրճատման, ցանքային առաջադրությունների կատարման և գերակատարման, քաշող ուժի, գյուղատնտեսական մեքենաների և գույքի ավելի նպատակահարմար ոգտագործման, կատարվող աշխատանքների վորակի բարելավման նշանով, զգալիորեն ներգրավելով և ոգտագործելով կանանց և անչափահասների աշխատանքը։

Որինակ, Լանչխութի ռայոնում 30 թվին մի կոլխոզնիկ վորոշ ժամանակամիջոցում թեյի ցանքով զբաղեցրել եր 394 քառ. սաժ. հող։

Գործարքին անցնելու հետևանքով այդ կոլխոզնիկը 31 թվին նույն ժամանակամիջոցում զբաղեցնում եր 800 քառ. սաժ. ցանք։

Լեվոդզեմ (Սենակի ռայոն) կոլխոզում գործարքի անցնելու հետևանքով 7 զույգ յեզներով որական մշակվում է այնքան տարածություն, վորքան մշակվում եր անցյալ տարի 15—20 զույգով։ Նեռուչևո (Սենակի ռայոն) կոլխոզում գարնանային ցանքը վերջացած է 11 որով ժամկետից վաղ, գերազանցելով ցանքի նախագծված պլանը։ Զեմո-Մաչխանի (Սղնախի ռայոն) կոլխոզում կանանց 50%-ը ներգրավված են կոլխոզի արտադրական աշխատանքում, մինչդեռ անցյալ տարի կանայք կոլխոզում զբաղվում չեյին աշխատում։ Բորչալվի և Ղարայազի ռայոնների մի շարք կոլխոզներում կին-կոլխոզնիկների զգալի մասը ներգրավված է կոլխոզների արտադրական աշխատանքում և այլն։

եֆեկտավորության բարձրացման հարցը և, կոլխոզային աշխատանքի առավելությունների գործնական ցուցադրության, կոլխոզային շարժման հետագա կազմակերպման հիման վրա, վորպեսզի 32 թվից վոչ ուշ կարելի լինի ավարտել համատարած կոլլեկտիվացումը առանձնահատուկ նշանակություն ունեցող կուլտուրաների և տեխնիկական մշակույթների ռայոններում, վերացնելով, նրա հիման վրա, կուլակությանը, վորպես դասակարգի և ստեղծել անհրաժեշտ պայմաններ համատարած կոլլեկտիվացմանն անցնելու համար նաև Վրաստանի մյուս ռայոններում։

Այս տնտեսական-քաղաքական խնդիրների լուծման մեջ վճռական և անհամեմատ ավելի կարևոր ողակներից մեկն է հանդիսանում աշխատանքի և հաշվառքի ճիշտ կազմակերպումը կոլխոզներում։

Խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները կոլխոզային շինարարության հարցի վերաբերմամբ սրում են ուշադրությունը հատկապես աշխատանքը ճիշտ կազմակերպելու և գործարքի սկզբունքները բոլոր կոլխոզներում կյանքի մեջ անցկացնելու վրա։

Կազմակերպելով ընտրովի հետազոտություն մի շարք ռայոնների կոլխոզներում գործարքին անցնելու դրության մասին, Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը նշում է, վոր խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները կոլխոզային շինարարության մասին և, մասնավորապես, գործարքին անցնելու վորոշումն ընդունվեց կոլխոզային լայն մասսաների կողմից մեծ գոհունակությամբ, վորպես աշխատանքի կազմակերպման անհամեմատ ավելի լավ մեթոդ և կոլխոզների տնտեսական ամրապնդման լավագույն ուղի։

Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը նշում է, վոր այն ռայոններում և այն կոլխոզներում, ուր մանրամասն մշակված եյին 6-րդ համագումարի վորոշումները և ապահովված եր [illegible] գործնական և ամե-

ГОС БИБЛИОТЕКА ՀԱՍՍՌ

նորյա ղեկավարությունը, կոլխոզնիկները ցույց եյին տալիս լավագույն կարգապահության որինակներ, ներքին կարգի, աշխատանքի արտադրողականության, կտրուկ բարձրացման և այլն կանոնները ճիշտ պահպանելու մտքով։ Հատկապես իրոք գործարքին անցնելու հետևանքով մի շարք կոլխոզներում գարնանային գյուղատնտեսական կամպանիան անցնում եր աշխատանքի արտադրողականության զգալի աճի, դաշտային աշխատանքների ժամանակամիջոցների կրճատման, ցանքային առաջադրությունների կատարման և գերակատարման, քաշող ուժի, գյուղատնտեսական մեքենաների և գույքի ավելի նպատակահարմար ոգտագործման, կատարվող աշխատանքների վորակի բարելավման նշանով, զգալիորեն ներգրավելով և ոգտագործելով կանանց և անչափահասների աշխատանքը։

Որինակ, Լանչխութի ռայոնում 30 թվին մի կոլխոզնիկ վորոշ ժամանակամիջոցում թեյի ցանքով զբաղեցրել եր 394 քառ. սաժ. հող։

Գործարքին անցնելու հետևանքով այդ կոլխոզնիկը 31 թվին նույն ժամանակամիջոցում զբաղեցնում եր 800 քառ. սաժ. ցանք։

Լեղվոդզեմ (Սենակի ռայոն) կոլխոզում գործարքի անցնելու հետևանքով 7 զույգ յեզներով որական մշակվում է այնքան տարածություն, վորքան մշակվում եր անցյալ տարի 15—20 զույգով։ Նեռչևո (Սենակի ռայոն) կոլխոզում գարնանային ցանքը վերջացած է 11 որով ժամկետից վաղ, գերազանցելով ցանքի նախագծված պլանը։ Զեմո-Մաչխանի (Սղնախի ռայոն) կոլխոզում կանանց 50%-ը ներգրավված են կոլխոզի արտադրական աշխատանքում, մինչդեռ անցյալ տարի կանայք կոլխոզում զբաղված չեյին աշխատում։ Բորչալվի և Ղարայազի ռայոնների մի շարք կոլխոզներում կին-կոլխոզնիկների զգալի մասը ներգրավված է կոլխոզների արտադրական աշխատանքում և այլն։

Այս բոլորն անպայման մեծ դեր եր խաղում, ինչպես գոյություն ունեցող կոլխոզների տնտեսական ամրապնդման մտքով, այնպես և գյուղացիության չքավոր-միջակ մասսաների նոր հոսանքը դեպի կոլխոզները կազմակերպելու գործում։

Նշելով այս դրական մոմենտները, Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը դրա հետ միասին հաստատում է, որ վոչ ամենուրեք կուսկազմակերպությունները կարողացան գլխավորել և անհրաժեշտ ղեկավարությամբ ապահովել խանդավառության ալիքը կոլխոզնիկների մեջ գործարքին անցնելու վերաբերմամբ։

Շատ կոլխոզներ և կոլխոզնիկներ, այսուս կոլխոզների փորձի հիման վրա և բացատրական կամպանիայի հետևանքով յեկան այն համոզման, որ անհրաժեշտ է անցնել գործարքի։ Սակայն, չունենալով սեփական փորձ, չկարողանալով ճիշտ դասավորել ույժերը և կազմակերպել հաշվառքը, այդ կոլխոզները մինչև այժմ փաստորեն չկարողացան անցնել գործարքի։ Իսկ մի շարք կուսակցական կազմակերպություններ (Աբխազիա, Ճիաթուրի, Խևի, Ջխարի, Սղնախ, Խոբի և այլն) անթույլատրելի ձևականորեն վերաբերվեցին կոլխոզների գործնականապես և իրոք գործարքին անցնելու գործին։ Դրան զուգընթաց նաև կենտրոնական կազմակերպությունները, որոնք կոչված են անմիջապես ղեկավարելու կոլխոզային շինարարությունը (Հողժողկոմ, Կոլխոզկենտրոն), չկարողացան մինչև այժմ հարմարվել ապահովելու տեղերի սիստեմատիկ և կանոնավոր ղեկավարությունը բոլոր կոլխոզներում, առանց բացառության, գործարք մտցնելու վերաբերմամբ։

Առանձնապես անհրաժեշտ է նշել, որ մի շարք ռայոններում «հավասարեցման» ոգտին, գործարքի սկզբունքների դեմ մղվող կուլակային ագիտացիային չի տրվել ամուր բոլշևիկական հակահարված։ Այդ հանդամանքը վկայում է, որ մի շարք կուսկազմակերպությունների և կենտրոնական կազմակերպությունների աշխատանքի պրակտիկայում կան ինքնահոսի տրամադրություններ կոլխոզային շինարարության—աշխատանքի ճիշտ կազմակերպման կարևորագույն բնագավառում—և թերագնահատվում է գործարքին անցնելը, որպես կոլխոզների տնտեսական կարողության ամրապնդման և կոլխոզային շարժման հետագա աճի հիմնական ֆակտորներից մեկը։

Կոլխոզներում աշխատանքի կազմակերպման հարցերին հատկապես այդպես վերաբերվելու հետևանքով, Վրաստանի շատ ռայոններում տեղ ունեն մի շարք եյական պակասություններ և թերություններ, որոնք մի քանի դեպքերում նույնիսկ խեղաթյուրում են ինչպես կուսակցության ընդհանուր գլխավոր գիծը, այնպես և հենց գործարքին անցնելու գաղափարը։

Զանազան ռայոններում և կոլխոզներում զանազան աստիճանով յերևան յեկող այդ թերությունները հիմնականում հանգում են հետևյալ մոմենտներին.

ա) գործարքին անցնելու ձևական բնույթը Վրաստանի մի շարք ռայոնների կոլխոզների մեծամասնության մեջ.

բ) առանձին կոլխոզներում մշակման նորմաների և աշխատավորների գնահատումների բացակայությունը, կամ թե չե, լավագույն դեպքում, մշակման զգալիորեն նվազեցրած նորմաների գոյությունը մի շարք կոլխոզներում (Աջարիստան, Աբխազիա, Գուրջաանի և այլն).

գ) կոլխոզնիկների աշխատանքի հաշվառքի բացակայությունը կամ թե չե հաշվառքի կատարելը չեկերի, ձողիկների միջոցով, դրամական արտահայտությամբ և այլն (Զուգդիդի, Կեդի, Գուդաուտի, Ոզուրգեթ, Բորչալու և այլն).

դ) վորակական ցուցանիշների հաշվառքի բացակայությունը (Սենակ, Սղնախ և այլն).

յե) գրեթե ամենուրեք կոլխոզներին վոչ իր ժամանակին աշխատանքի հաշվառքի ձևեր և աշխատանքային գրքույկներ մատակարարելը.

զ) աշխատանքի հաշվառքի բարդությունն այն կոլխոզներում, ուր մտցված է գործարք (Լանչխութ, Ոզուրգեթ, Սենակ, Գորի և այլն).

է) բանվորական ույժի անկանոն դասավորումը, դեռևս «դիմադրկության» գոյությունը, կենդանի և մեռած դույքի աննպատակահարմար ոգտագործումը, գոյություն ունեցող բրիգադների ստվարությունը՝ չիմանալով բրիգադներին խմբերի և անհատական գործարքի բաժանելը (Բորչալու, Սենակ, Սուխում, Գուրջաանի, Սղնախ և այլն).

ը) այսպես կոչված «տնտեսահաշվի» բրիգադների գոյությունը, վորոնք ըստ էության ներկայացնում են կոլխոզ կոլխոզի մեջ (Սենակ).

թ) կանանց և անչափահասների աշխատանքի ոգտագործման ակներև թերաղնահատումը գրեթե բոլոր կոլխոզներում և կանանց աշխատանքի գնահատումների նորմաների արհեստական կրճատումը (առանձնապես Սղնախի, Գորու և Սենակի ռայոններում).

ժ) կոլխոզնիկներին ավանսավորելը բոլոր ռայոններում վոչ ըստ փաստորեն բանած աշխատաորերի քանակի, այլ ըստ ուտողների սկզբունքի, կարիքավորության սկզբունքի, ըստ բանվորական ձեռքերի քանակի և այլն.

ի) աշխատանքի կազմակերպողների և հաշվառուների կադրերի անթույլատրելի թույլ նախապատրաստումը կոլխոզնիկներից և կոլխոզնիկուհիներից.

լ) աշխատանքի կազմակերպման սոցիալիստական ձևերի դեռևս շարունակվող թույլ ծավալումը—սոցիալիստական մրցակցության ձևական բնույթը, պայմանագրերի կատարման ստուգման բացակայությունը, կեղծ հարվածայնության դեպքերը և հասարակական բուքսիրի մեթոդի անբավարար գործադրությունը։

II

Կոլխոզներում աշխատանքի ճիշտ կազմակերպման հարցի հետ սերտ կապված է կոլխոզնիկների արտադնացության (одходничество) կազմակերպման հարցը։

Ցերկրի ինդուստրացման արագ թափերը, արդյունաբերական, ճանապարհա-տրանսպորտային, կոմմունալ շինարարության աճը, սովխոզների և ՄՏԿ ցանցի զարգացումը, գյուղական տնտեսության կոլլեկտիվացումը և գյուղացիության չքավոր-միջակ մասսաների նյութական դրության բարելավումն ապահովեցին գործազրկության վերացումը ցերկրի ներսում և դրա հետ միասին առաջադրեցին ինչպես վորակավոր, այնպես և անվորակ բանվորական ույժի լրացուցիչ քանակի պահանջը։

Առանձին նոր կառուցումների, ֆաբրիկաների, գործարանների և սովխոզների բանվորական ույժի բավարարման գործում, կոլխոզներին պատկանում է առաջնանակարգ դեր զարգացման տվյալ շրջանում։

Հատկապես աշխատանքի ճիշտ կազմակերպման, գործարքի լայն մտցման, յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի արտադրողականության բարձրացման, կանանց և անչափահասների աշխատանքի ոգտագործման հիման վրա, կոլխոզները կարող են և պետք է դառնան արդյունաբերության և գյուղական տնտեսության սովխոզային սեկտորի բանվորական ույժի մատակարարման կազմակերպիչներ արտադնացության կազմակերպման միջոցով։

Սակայն, չնայելով այդ հարցի վերաբերյալ մի շարք ցուցմունքներին և կոլխոզնիկների արտադնացության խոր տնտեսական քաղաքական նշանակությանը, արտադնացության կազմակերպման հարցին պլանային սկզբունքներով, ինչպես ցույց է տալիս կատարված հետազոտու-

թյունը, գրեթե վոչ մի ռայոնում կամ կոլխոզում չի հատկացվում բավականաչափ ուշադրություն։

Վոչ մի կոլխոզ չունի պայմանագրեր առանձին արդյունաբերական կամ դյուղատնտեսական ձեռնարկությունների համար, արտադնացության կարգով, կոլխոզնիկներ հատկացնելու վերաբերմամբ. կոլխոզի վոչ մի արտադրական պլանում չկա բանվորական ույժի արտադնացության կազմակերպման հետ կապված նախնական հաշիվ (հաշվեկշիռ). կուսակցության վոչ մի ռայկոմ ուշադրությունը չի սրել այդ հարցի վրա, թողնելով ինքնահոսի նրա գործնական լուծումը։

Արտադնացության ամբողջ տնտեսական - քաղաքական կարևորության չհասկանալն ամենից լավ իր անդրադարձումը գտավ Սալոմալո (Սենակի ռայոն) կոլխոզում, վորը սոցմրցության հրավիրեց մյուս կոլխոզին նրա համար, վոր «վոչ մի կոլխոզնիկի չհատկացնեն արտադնացության»։

Արտադնացության հասկացողության ամենակոպիտ խեղաթյուրումն է հանդիսանում այն փաստը, յերբ կոլխոզն իր անդամներին ուղարկում է աշխատանքի արդյունաբերական ձեռնարկությունները կամ սովխոզները, իսկ ինքն ոգտվում է «հասարակական բուքսիրով» մյուս կազմակերպությունների կողմից կամ ռայոնական կենտրոններից ուղարկվող աշակերտների, կոմյերիտների և այլնի ոգնությամբ, (Դուդաուտի ռայոն)։

Մինչդեռ կատարված հետազոտության առանձին փաստերն ասում են այդ ուղղությամբ զգալի կերպով, բոլորովին չոգտագործված հնարավորությունների մասին։ Որինակ, Սենակի ռայոնի 5 կոլխոզներում գարնանային դյուղատնտ. կամպանիայի ամբողջ ժամանակաշրջանում աշխատանքի կատարված ծախսման նախնական հաշիվը ցույց է տալիս, վոր այդ ամբողջ ժամանակաշրջանում յուրաքանչյուր կոլխոզնիկ ըստ ծախսված աշխատանքի քանակի զբաղված եր

աշխատանքում միջին առմամբ 11 որից վոչ ավելի։ Սակայն, չնայած բանվորական ույժի այդպիսի առատությանը հետազոտված կոլխոզների ներսում, նրանցից վոչ մեկը մինչև այժմ չի հատկացրել վոչ մի կոլխոզնիկի արտադնացության կարգով։

Կոլխոզներում բանվորական ույժի առատ լինելու նման պատկերը նկատվում է նաև բոլոր մյուս հետազոտված ռայոնների վերաբերմամբ։

«Նոր Գյուղ» կոլխոզում (Սուխումի ռայոն), ծախսված աշխատանքի քանակի և վորակի համապատասխան ավանսներ բաժանելուց հետո, հենց հետևյալ որը, խիստ բարձրացավ յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի արտադրողականությունը (փոխանակ 1 հեկտարի վրա ծախսելու 45 աշխատաոր ծախսոտ տնկելու համար, նույն աշխատանքը կատարեցին 25 աշխատաոր ծախսելով)։ Ձնայած մշակման նորմայի այդ բարձրացման հետևանքով առաջ յեկած բանվորական ույժի լրացուցիչ առատությանը, վոչ մի կոլխոզնիկ տվյալ կոլխոզի կողմից չի հատկացվել արտադնացությանը։

Այս բոլոր փաստերն ասում են, վոր կոլխոզներում աշխատանքի ճիշտ կազմակերպման և արտադնացության կազմակերպման հարցին մի շարք ռայոնների կուսակցական, կոմյերիտական, խորհրդային և կոլխոզա-կոոպերատիվային կազմակերպությունները ցույց տվին անթույլատրելի անտարբեր վերաբերմունք։

Դրա հետ միասին կենտկոմը նշում է, վոր առանձին տնտեսական մարմինների (ձեռնարկությունների, դյուղատնտեսական միությունների և այլն) կողմից յերևան չի յեկել բանվորական ույժ հավաքելու նախաձեռնություն առանձին կոլխոզների հետ համապատասխան պայմանագրեր կնքելու միջոցով, վորպեսզի այդ հարցի դրվելու փաստով զարկ տրվի կոլխոզնիկների արտադնացության կազմա-

կերպմանը։ Վոչ Կոլխոզկենտրոնը և վոչ էլ Հողժողկոմատը մինչև այժմ ձեռք չեն առել վճռական միջոցներ արտադնացության կազմակերպման գործում բեկում առաջ բերելու համար և չեն ապահովել համապատասխան ղեկավարությամբ այդ հարցում տեղական փոխմարմինները, ռայկոլխոզմիությունները, իսկ նրանց միջոցով նաև ասանձին կոլխոզները։

III

Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը համարում է բոլորովին անթույլատրելի և հետագայում անհանդուրժելի աշխատանքի և արտադնացության կազմակերպման հարցի վերոհիշյալ դրությունը կոլխոզներում։

Սրելով բոլոր մարզկոմների, ռայկոմների, քաղկոմների, գյուղական, կոլխոզային և սովխոզային բջիջների, նույպես և խորհրդային, կոլխոզա-կոոպերատիվային, արհմիութենական, հասարակական կազմակերպությունների ուշադրությունը բոլոր կոլխոզները զործարքի փոխադրելու և արտադնացությունը պլանային կերպով կազմակերպելու խոր տեսական-քաղաքական կարևորության վրա, Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը վորոշում է.

Ա. Կոլխոզներում աշխատանքը կազմակերպելու գծով

1. Առաջարկել Վրաստանի Կոմկուսի (բ) բոլոր մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին անհապաղ վճռական բեկում առաջ բերել առանց բացառության բոլոր կոլխոզներում զործարք մտցնելու ընդգավառում, ծավալելով համապատասխան մասսայական քաղաքական-բացատրական աշխատանք կոլխոզներում այնպիսի հաշվով, վորպեսզի բերքահավաքի կամպանիան իրականացվի բոլոր կոլխոզնե-

ում առանց բացառության բոլոր աշխատանքները զործարքի փոխադրելով։

Այդ նպատակով անցկացնել հետևյալ միջոցառումները.

ա) Կցել բերքահավաքի կամպանիայի ժամանակ ռայոնական մասշտաբի մեկական աշխատավոր անհամեմատ ավելի թույլ կոլխոզներին, ուր մինչև այժմ փաստորեն չի իրացված զործարքը։

բ) Յուրաքանչյուր կոլխոզից, վորի մեջ արդեն կա զործնական փորձ աշխատանքի զործարքային սիստեմի վերաբերմամբ, ջոկել վոչ պակաս 5 լավագույն բրիգադիրների և կցել այն կոլխոզներին, ուր զործարքը չի անցկացված, լավագույն կոլխոզների աշխատանքի փորձը նրանց մեջ փոխադրելու համար։

գ) Առաջարկել Հողժողկոմատին 5-որյա ժամանակամիջոցում, Ագիտմասբաժնի կողմից ռայոններին ուղարկված 20 ասպիրանտներին լրացուցիչ, մոբիլիզացիայի յենթարկել գյուղատնտ. ինստիտուտի վոչ պակաս 40 ասպիրանտների և ուսանողների և ուղարկել նրանց բոլոր ռայոնները 1 ամիս ժամանակամիջոցով ռայկոլխոզմիություններին ոգնելու համար, վորպես անհատապես պատասխանատու անձեր լիովին անցկացնելու համար այն բոլոր միջոցառումները, վորոնք կապված են կոլխոզները զործարքի փոխադրելու և արտադնացությունը ռայոնական ծավալով կազմակերպելու հետ։ Մոբիլիզացիայի յենթարկված ընկերների աշխատանքը հաշվել, վորպես նրանց արտադրական պրակտիկան։

2. Առաջարկել Վրաստանի Հողժողկոմատին և Կոլխոզկենտրոնին վերակազմել իրենց աշխատանքը դեպի տեղերի սիստեմատիկ ամենորյա ոպերատիվ ղեկավարության կողմը, վորպեսզի կարելի լինի բերքահավաքի կամպանիան իրականացնել, փոխադրելով զործարքի բոլոր կոլխոզները։

Այդ նպատակով Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը պետք է անցկացնեն հետևյալ միջոցառումները.

ա) Ապահովել աշխատանքը կոլխոզներում կազմակերպելու և արտադնացության յերեքորյա դասընթաց-կոնֆերենցիաների անցկացումը գյուղատնտ. ինստիտուտի մոբիլիզացիայի յենթարկվող ասպիրանտների և ուսանողների համար և նրանց ռայոններն ուղարկելը հուլիսի 25-ից վոչ ուշ։

բ) Անհապաղ ուղարկել տեղերն առանց բացառության բոլոր կոլխոզների համար աշխատանքի հաշվառքի ձևերը, նույնպես և աշխատանքային գրքույկները, տալով համապատասխան բացատրող հրահանգներ։

գ) Հիշյալ ձևերն ուղարկելու ժամանակ առանձին ուշադրություն դարձնել կոլխոզներում հաշվառքը դնելու և, առանձնապես, կոլխոզնիկների աշխատանքային գրքույկներում գրանցումներ անելու պարզության վրա։

դ) Պարտավորեցնել իրենց հրահանգչական ապարատին, նույնպես և այս կամ այն առաջադրություններով տեղերը մեկնող պատասխանատու աշխատավորներին, անպայման ստուգել գործարքի անցնելու դրությունը կոլխոզներում և հասցնել տեղերում անհրաժեշտ ոգնություն առանձին կոլխոզներին և ռայկոլխոզմիություններին՝ դրսևորված թերությունները վերացնելու վերաբերմամբ համապատասխան ցուցմունքներ տալու միջոցով։

յե) Ոգոստոսի 15-ին կազմակերպել գործարքին անցնելու ստուգումը Վրաստանի առանձին ռայոններում, ստուգման արդյունքների մասին զեկուցում տալով Կենտկոմի Քարտուղարությանը։

3. Հանձնարարել Վրաստանի ԲԳՏ 5-որյա ժամանակամիջոցում դրսևորել կոլխոզներին վոչ իր ժամանակին աշխատանքի հաշվառքի ձևեր և աշխատանքային գրքույկներ մատակարարելու մեջ անհատապես հանցավորներին և և յենթարկել նրանց ամենախիստ պատասխանատվության սաբոտաժի և ամենակարեոր տնտեսական-քաղաքական ձեռնարկությունը քայքայելու համար, հրապարակելով մամուլի մեջ։

4. Առաջարկել Վրաստանի Կոմկուսի (բ) մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին, նույնպես և Կոլխոզկենտրոնին և Հողժողկոմատին ապահովել մինչև բերքահավաքի կոմպանիայի սկսվելը գարնանային ցանքային և դաշտամշակման կամպանիայի ժամանակաշրջանում յուրաքանչյուր կոլխոզնիկի բանած աշխատաորերն աշխատանքային և անդամակցական գրքույկներում գրանցելու ավարտումն ամենուրեք։

5. Առաջարկել Կոլխոզկենտրոնին, մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին դեկադային ժամանակամիջոցում վերանայել մշակման սահմանված նորմաները և նրանց գնահատումներն աշխատաորերով աշխատանքների բոլոր տեսակների վերաբերմամբ, ապահովելով դրա հետ՝

ա) Նորմաների մշակումը յուրաքանչյուր կոլխոզի համար և աշխատանքների առանձին տեսակների վերաբերմամբ, հավասարեցնելով լավագույն հարվածային-կոլխոզնիկի փաստացի բանվորական որվա նորմաներին.

բ) այդ նորմաների քննությունը կոլխոզնիկների արտադրական խորհրդակցություններում և ժողովներում, դրավելով չքավորներին և անհատական-միջակներին.

գ) նորմաների սահմանելը հասարակ, յուրաքանչյուր կոլխոզնիկի համար հասկանալի ձևով.

դ) մշակված նորմաների աղյուսակի կախելը յուրաքանչյուր կոլխոզում աչքի ընկնող տեղում (կոլխոզի վարչության մեջ, խրճիթ-ընթերցարաններում և այլն) առանձին կոլխոզնիկներին նրանց հետ ամեն որ ծանոթացնելու համար։

6. Առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին, ռայկոմներին և կոլխոզային բջիջներին սահմանել ամենախիստ սկզբունք կոլխոզնիկների ավանսավորման դիրեկտիվը

կատարելու վրա, խիստ համապատասխան նրանց բանած աշխատաորերի քանակին և վորակին, վճռական պայքար մղելով կարիքավորության սկզբունքներով, ուտողների, ընտանիքում յեղած աշխատող ձեռքերի քանակով և այլն ավանսավորելու դեմ, համարելով այդ փորձերը, վորպես աջ ոպորտունիզմի սուր արտահայտություն գործնականում և վորպես կուլակային ագիտացիայի ազդեցության հետևանք, վոր չի հանդիպում պատշաճ հակահարվածի։ Այդ նպատակով առաջարկվում է մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին անհապաղ անցկացնել հետևյալ միջոցառումները.

ա) Կոլխոզային բջիջների միջոցով ստուգել փաստորեն ավանսավորման կարգով կոլխոզնիկների համար կատարված տվյալությունները.

բ) այն կոլխոզներում, ուր ավանսավորումն անց է կացված բանած աշխատաորերի վոչ քանակի և վորակի սկզբունքներով, ապահովել դրամական կամ բնական ավանսների հետևյալ տվյալությունների ժամանակ համապատասխան վերահաշիվը, վորպեսզի տրված ավանսների ամբողջ գումարը համապատասխանի փաստորեն յուրաքանչյուր կոլխոզնիկի բանած աշխատաորերին.

գ) այս միջոցառումը կատարելու անձնական պատասխանատվությունը դնել՝ կոլխոզի մասշտաբով—կոլխոզի նախագահի և կոլխոզային բջջի քարտուղարի վրա, իսկ ռայոնի մասշտաբով — ռայկոլխոզմիության և Վրաստանի Կոմկուսի (բ) ռայկոմի ագիտմասբաժնի վարիչի վրա։

7. Առաջարկել Կոլխոզկենտրոնին, Հողժողկոմատին և բոլոր կուսկոմներին ապահովել ուժերի ճիշտ դասավորումը կոլխոզներում գյուղատնտեսական աշխատանքների առանձին պրոցեսները կատարելու մեջ։

Այդ նպատակով անցկացնել հետևյալ միջոցառումները, կապելով նրանց գործարքի անպայման իրացման հետ.

ա) անհապաղ կցել առանձին գյուղատնտ. մեքենաներին, տրակտորներին և յեզներին, առանձին կոլխոզնիկների կամ կոլխոզնիկների բրիգադներ, արմատից վերացնելով դիմազրկությունը.

բ) բերքահավաքի կամպանիայի առիթով նշանակել հնձված և հավաքված բերքի մշտական սայլապանների առանձին կադր.

գ) ապահովել առանձին խմբերի հատկացնելը խոշոր հողամասային բրիգադներում.

դ) ապահովել աշխատանքի վճարման գործարքային սիստեմը վոչ միայն բրիգադների, այլ և խմբերի վերաբերմամբ բրիգադների և անհատապես առանձին կոլխոզնիկների մեջ.

յե) անհապաղ մշակել բոլոր կոլխոզներում (վորտեղ դա դեռ չի իրականացված) բերքահավաքի կամպանիայի, նույնպես և առաջիկա աշնանային գյուղատնտ. կամպանիայի անցկացման կոնկրետ ոպերատիվ պլանը, ճշտությամբ արձանագրելով յուրաքանչյուր կոլխոզնիկի ֆունկցիաներն ու պարտականությունները և կատարելով պահանջվող բանվորական ուժի նախնական հաշիվը, ղեկավարվելով լավագույն հարվածային-կոլխոզնիկի մշակման փաստացի նորմաներով և մաքսիմալ կերպով ոգտագործելով կանանց և անչափահասների աշխատանքը.

զ) ապահովել առանձին բրիգադների և խմբերի աշխատանքի գնահատումը, նայելով վոչ միայն փաստորեն ծախսված աշխատաորերի քանակին, այլ և բերքահավաքի ժամանակ ունեցած կորուստներին.

ե) մշակել յուրաքանչյուր կոլխոզում կորուստների դեմ պայքարելու միջոցառման կոնկրետ պլանը, գլուխ բերելով կորուստների լիակատար վերացումը բերքահավաքի ժամանակ և կոլխոզային դաշտերի ամբողջ բերքի լիակատար հավաքը։

Ч 31/77-63
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՍՌ
ГССР

8. Առաջարկել բոլոր կազմակերպություններին անցկացնել ամենավճռական պայքար կոլխոզներում կանանց և անչափահասների աշխատանքի ոգտագործման թերագնահատության դեմ, նույնպես և տղամարդկանց հետ միատեսակ աշխատանքներում զբաղված կանանց աշխատանքի գնահատությունն անթույլատրելի կերպով իջեցնելու դեմ։

Այդ նպատակով առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին՝

ա) առանձին կոլխոզներին կցված պատասխանատու աշխատավորների միջոցով անցկացնել համապատասխան բացատրական աշխատանք կոլխոզնիկների մեջ.

բ) կանանց և անչափահասների աշխատանքի ոգտագործման հարցերը դնել կոլխոզնիկների արտադրական խորհրդակցություններում և ժողովներում, ապահովելով միատեսակ գնահատումների սահմանելը տղամարդկանց հետ ունեցած միատեսակ աշխատանքների համար.

գ) այդ ամբողջ աշխատանքն անցկացնել դեկադային ժամանակամիջոցում։

9. Առաջարկել Հողժողկոմատին, Կոլխոզկենտրոնին, մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին ապահովել բոլոր կոլխոզներում գյուղատնտ. արտելի որինակելի կանոնադրության 14 և 15 կետերի մեջ փոփոխություններ մտցնելը մինչև ոգոստոսի 1-ը, այդ հարցը կոլխոզնիկների ժողովներում դնելու և այդ միջոցառման նշանակությունը կոլխոզնիկների մասսաներին բացատրելու միջոցով։

10. Առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին ձեռք առնել վճռական միջոցներ նախապատրաստելու աշխատանքի կազմակերպիչներ և հաշվառուներ աշխատանքում իրենց ցուցադրած լավագույն կոլխոզնիկներից և առանձնապես կոլխոզնիկուհիներից, անցկացնելով այդ աշխատանքը հետևյալ նշանաբանով. «Ոչ մի կոլխոզ առանց աշխատանքի կազմակերպչի, ոչ մի բրիգադ առանց հաշվառուի»։

Այդ իրականացնելու համար առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին անցկացնել հետևյալ միջոցառումները.

ա) կազմակերպել ոգոստոսի 1-ից վոչ ուշ յուրաքանչյուր ռայոնում կոլխոզների աշխատանքի հաշվառուների հնգօրյա դասընթաց-կոնֆերենցիաներ, տվյալ ռայոնի բոլոր կոլխոզների յուրաքանչյուր բրիգադի համար վոչ պակաս, քան մի կոլխոզնիկ կամ կոլխոզնիկուհի այդ դասընթացների միջով բաց թողնելու հաշվով.

բ) միաժամանակ անցկացնել կոլխոզների աշխատանքի կազմակերպիչների նախապատրաստման յերկշաբաթյա դասընթացներ, տվյալ ռայոնի յուրաքավչյուր կոլխոզի համար վոչ պակաս, քան մի կազմակերպիչ այդ դասընթացների միջով բաց թողնելու հաշվով.

գ) ոգոստոսի 1-ից վոչ ուշ անցկացնել բոլոր ռայոններում հնգօրյա դասընթաց-կոնֆերենցիաներ ռայոնի կոլխոզների բոլոր հաշվի աշխատավորներին վերապատրաստելու համար.

դ) այդ դասընթացներն անցկացնելու համար ոգտագործել ռայկոլխոզմիությունների, ռայկոոպմիությունների, ռայմիասկոոպների, ռայհողբաժինների տեղական ուժերին և ռայոնի մյուս անհատապես նախորոշված աշխատավորներին։

11. Առաջարկել Հողժողկոմատին Կոլխոզկենտրոնի հետ միատեղ ապահովել ռայոններում դասախոսների ուժերով անցկացվելիք դասընթացները, ոգտագործելով այդ նպատակով գյուղատնտ. և ֆին. կոոպ. ինստիտուտների ասպիրանտներին և ուսանողներին, միաժամանակ ոգտագործելով տեղական ռայոնական ուժերին։

12. Առաջարկել Վրաստանի Լուսժողկոմին և Հողժողկոմին ապահովել գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների (կոմյերիտական դպրոցներ, զանազան ասիճանի դպրոցներ, տեխնիկումներ, գյուղատնտ. ինստի-

տուտներ և այլն) ծրագրի մեջ մի շարք զբաղմունքներ և դասախոսություններ մտցնելը կոլխոզներում աշխատանքը կազմակերպելու, գործարքի սկզբունքների և պրակտիկայի, կոլխոզներում հաշվառքը դնելու, արտադնացությունը կազմակերպելու հարցերի վերաբերմամբ և այլն։

Բ. Արտագնացության կազմակերպման գծով

1. Առաջարկել բոլոր մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին անհապաղ ծավալել լայն մասսայական քաղաքական-բացատրական աշխատանք կոլխոզնիկների մեջ արտագնացության մասին ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումը (հրատարակված և «Զարյա Վոստոկա»-յում և «Կոմմունիստ»-ում հուլիսի 3-ին) ժողովրդականացնելու վերաբերմամբ, սրելով կոլխոզնիկների առանձին ուշադրությունը կոլխոզներին և հենց արտագնացներին տրվելիք արտոնությունների վրա։

Այս վորոշումը մշակել կուսկոմյերիտական բաց ժողովներում, զրավելով կոլխոզնիկներին, չքավորներին և անհատական-միջակներին։

2. Առաջարկել Վրաստանի Հողժողկոմատին և Կոլխոզկենտրոնին դեկադային ժամանակամիջոցում մշակել գործնական միջոցառումներ արտագնացության մասին ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումն իրագործելու վերաբերմամբ և ներկայացնել նրանց Վրաստանի Ժողկոմխորհին հաստատելու համար։

3. Արտագնացության կազմակերպման ամբողջ աշխատանքը կապել կոլխոզները գործարքի փոխադրելու հետ, գլուխ բերելով մշակման բարձրացրած նորմաներ սահմանելու և կանանց ու անչափահասների աշխատանքի մաքսիմալ ոգտագործման միջոցով կոլխոզներում ավելացած բանվորական ուժ հատկացնելը։

4. Առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին ապահովել կոլխոզներում բերքահավաքի և աշնանային գյուղատնտ. կամպանիայի բանվորական արտադրական պլանները կազմելու ժամանակ՝

ա) մասնագիտություն ունեցող կոլխոզնիկների (ատաղձագործներ, քարտաշներ, հյուսներ և այլն) հաշվառքը.

բ) վորոշել յուրաքանչյուր կոլխոզում առանձին չվորակավորված կոլխոզնիկների քանակը, վորոնք կարող են հատկացվել արտագնացության համար աշխատանքի կազմակերպումն ավելի լավ դնելու հետևանքով.

գ) այդ տեղեկությունների տալը Կոլխոզկենտրոնին յուրաքանչյուր կոլխոզի վերաբերմամբ առանձին ոգոստոսի 15-ից վոչ ուշ.

դ) համապատասխան պայմանագրերի կնքելը կոլխոզների և առանձին ձեռնարկությունների (արդյունաբերական, տրանսպորտային և այլն), նոր կառուցումների, սովխոզների միջև.

յե) ամենորյա վերահսկողություն սահմանելը ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշման առանձին կետերը ճշտությամբ կատարելու վրա, առանձնապես, այն կոլխոզներին արտոնություններ տալու մասում, վորոնք հատկացնում են կոլխոզնիկներ արտագնացության համար և հենց արտագնաց կոլխոզնիկներին (առավելապես կոլխոզներին գյուղատնտ. գույք, դեֆիցիտային ապրանքներ մատակարարելը, արտոնություններ կոլխոզնիկների ընտանիքների համար դպրոցներն ընդունվելու, աշխատանքով ապահովելու վերաբերմամբ և այլն)։

5. Առաջարկել Վրաստանի Կոլխոզկենտրոնին տեղերից ստացված նյութերի հիման վրա մշակել Աշխժողկոմի հետ միատեղ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերին և առանձին օբյեկտներին (արդյունաբերական ձեռնարկություններ, նոր կառուցումներ, սովխոզներ և այլն) բանվո-

բական ուժ մատակարարելու կոնկրետ պլանը արտադնացության կազմակերպման կարգով, կցելով ոգոստոսի 25-ից վոչ ուշ առանձին կոլխոզներին այն կազմակերպությունները, վորոնք հայտնել են բանվորական ուժի պահանջ։

6. Առաջարկել Աշխժողկոմին, համաձայնության գալով Կոլխոզկենտրոնի հետ, ապահովել կոլխոզներում բանվորական ուժի պայմանագրերի կնքելն իր ժամանակին առանձին կազմակերպությունների կողմից, պահպանելով ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշմամբ նախատեսված բոլոր պայմանները (որածախսերի և ճանապարհածախսերի վճարում և այլն)։

7. Առաջարկել Աշխժողկոմատին և Կոլխոզկենտրոնին դեկադային ժամանակամիջոցում մշակել կոլխոզներում բանվորական ուժ ստանալու տիպային պայմանագիր, խիստ համապատասխան ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշմանը և ուղարկել նրան Վրաստանի Ժողկոմխորհի սանկցիայով բոլոր կոլխոզներին հուլիսի 25-ից վոչ ուշ։

8. Առաջարկել Վրաստանի Ժողկոմխորհին ապահովել կոլխոզներին և արտադնաց կոլխոզնիկներին տրվելիք առանձին արտոնությունների գործնական անցկացումը կյանքի մեջ գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելու, դպրոց ընդունելու, սոց. կենցաղային և կուլտ-լուսավորական հիմնարկությունների (ճաշարաններ, մանկամսուրներ, հրապարակներ) ցանցը զարգացնելու վերաբերմամբ և այլն։

IV

1. Առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին կոլխոզները գործարքի փոխադրելու և արտադնացությունը կազմակերպելու ամբողջ աշխատանքը ծավալել, վորպես լայն հասարակական-մասսայական, տնտեսական-քաղաքական կամպանիա։

Այդ նպատակով՝

ա) Լայն ոգտագործել սոցմրցակցության և հարվածայնության մեթոդն աշխատանքի լավագույն կազմակերպման, գործարքի լավագույն ցուցանիշների, մշակման ավելի մեծ նորմաների, կանանց և անչափահասների աշխատանքի մաքսիմալ ոգտագործման, արտադնացության լավագույն կազմակերպման և արդյունաբերական ձեռնարկությունների, սովխոզների համար բանվորական ուժ ուղարկելու մեջ ունենալիք աջակցության համար և այլն։

Սոցմրցությունը գործադրել ինչպես կոլխոզների, այնպես և առանձին բրիգադների, խմբերի և կոլխոզնիկների միջև կոլխոզի ներսում.

բ) ապահովել սոցմրցության պայմանագրերի կատարման ստուգումը, լայն հրապարակելով սոցմրցության հետևանքները պատի թերթերում, ռայոնական և կենտրոնական մամուլում, կարմիր տախտակի վրա, ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում և այլն.

գ) լայն գործադրել մրցողներին պարգևատրելու զանազան ձևերը (կարմիր դրոշ, հարվածայինի կոչում, փոքրիկ գրադարան, գյուղատնտ. գույք, գերազասություն հարվածայինի ընտանիքի անդամներին դպրոց ընդունելու ժամանակ և այլն).

դ) լայն ոգտագործել լավագույն կոլխոզներով, բրիգադներով, խմբերով աշխատանքի կազմակերպման կամ արտադնացության այս կամ այն մասում յետ մնացողների հասարակական բուքսիրի մեթոդը կոլխոզներում.

յե) գլխավորել կոլխոզնիկների նախաձեռնությունը հանդիպական պլանները մշակելու, մշակման նորմաները բարձրացնելու, աշխատավորների գնահատումներն իջեցնելու, արտադնացությանը բանվորական ուժ հատկացնելու վերաբերմամբ և այլն, լայն գործադրելով դրա հետ սոցիալիստական մրցման հրավերի մեթոդները։

2. Ապահովել կոմյերիտական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը կոլխոզները գործարքի փոխադրելու և արտադնացությունը կազմակերպելու վերաբերմամբ անցկացվող աշխատանքի մեջ։ Այդ նպատակով առաջարկել Վրաստանի ԼԿՅԵՄ Կենտկոմին անցկացնել հետևյալ միջոցառումները.

ա) Մշակել Վրաստանի ԼԿՅԵՄ բոլոր սովխոզային, ՄՏ կայանային, կոլխոզային և գյուղական բջիջներում գործարքի և արտադնացության կոնկրետ հարցերը։

բ) Ապահովել սոցմրցության և հարվածայնության զարգացումը կոմյերիտ-կոլխոզնիկների մեջ կոլխոզներում աշխատանքի լավագույն ցուցանիշների համար, առաջ բերելով այնպիսի դրություն, որ կոմյերիտները լինեն կոլխոզները գործարքի փոխադրելու և արտադնացությունը կազմակերպելու հրահրողները։

3. Մասսայական աշխատանքի անցկացման մեջ լայն ոգտագործել տեղական գյուղական ինտելիգենցիային (գյուղատնտեսներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն)։

Այդ նպատակով՝

ա) Առաջարկել բոլոր մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին, ոգտագործելով ռայկոլխոզմիությունների ուժերը, անցկացնել հուլիսի 25-ից վոչ ուշ գյուղական ինտելիգենցիայի յերկրորյա դասընթաց-կոնֆերենցիաներ հատկապես աշխատանքի կազմակերպման ու գործարքի անցնելու և արտադնացության մասին ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումը ժողովրդականացնելու հարցերի վերաբերմամբ։

բ) Առաջարկել Լուսաշխի Միության ԿՎ տալ համապատասխան ցուցմունքներ իր ստորին բջիջներին գյուղական ուսուցչությանը մաքսիմալ կերպով աշխատանքի մեջ ներգրավելու մասին կոլխոզներում աշխատանքի կազմակերպումը կանոնավորելու, նրանց գործարքի փոխադրելու և

կոլխոզնիկների արտադնացությունը ժողովրդականացնելու վերաբերմամբ։

գ) Առաջարկել Վրաստանի Հողժողկոմին տալ համապատասխան ցուցմունքներ հողային մարմիններին հենց այդ աշխատանքի մեջ տեղական գյուղատնտեսներին (ռայոնական, սովխոզային և այլն) ներգրավելու մասին։

4. Հիշյալ ամբողջ աշխատանքն անցկացնելու մեջ առանձին ուշադրություն դարձնել ՄՏԿ և սովխոզների կազմակերպող դերի վրա։

Այդ նպատակով՝

ա) Առաջարկել յերկրագործական և անասնաբուծական սովխոզների բանվորների, բատրակների և ՄՏԿ բանվորների միությունների կենտրոնական վարչություններին իրենց ստորին բջիջների միջոցով ծավալել մասսայական աշխատանք սովխոզների և ՄՏԿ բանվորների մեջ աշխատանքի լավագույն կազմակերպման փորձը կոլխոզները փոխադրելու և գործարքի իրականացման մեջ (մշակման նորմաներ, աշխատաորերի գնահատումներ, հաշվառքի կազմակերպում, աշխատանքային գրքույկների մեջ գրանցում և այլն) շրջակա կոլխոզներին գործնական ոգնություն հասցնելու վերաբերմամբ.

բ) դեկադային ժամանակամիջոցում մշակել սովխոզների և ՄՏԿ արտադրական խորհրդակցություններում բանվորական ուժի պահանջը և այդ հարցերը շրջակա կոլխոզները փոխադրելու միջոցով գնել նրանց մեջ կոլխոզնիկներ հատկացնելու հարցը արտադնացության կարգով, թույլ չտալով սակայն կոպիտ վարչականություն և անցկացնելով այդ ամբողջ աշխատանքը համոզմունքի և բանվորական ուժի հաշվեկշռի նախնական հաշվի հիման վրա տվյալ կոլխոզում կոլխոզնիկների հետ միասին.

գ) առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին ապահովել սովխոզների և ՄՏԿ փորձի կոլխոզներ

փոխադրելը, ույժերի դասավորման, մեքենայացված և կենդանի քաշող ույժի մաքսիմալ ոգտագործման, դիմազրկության վերացման, այրվող նյութի ծախսման վրա վերահսկողությունն իրականացնելու, ծախսված աշխատանքի քանակի և վորակի վերաբերմամբ փաստացի մշակումը վորոշելու, կոլխոզներում հաշվառքը և հաշվետվությունը կանոնավորելու, աշխատանքի առանձին պրոցեսների վերաբերմամբ բանվորական ծրագրեր կազմելու մեջ և այլն։

5. Ծավալել լայն մասսայական աշխատանք կին-կոլխոզնիկների մեջ։

Այդ նպատակով՝

ա) առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին անցկացնել կին-կոլխոզնիկների հատուկ խորհրդակցություններ, գրավելով չքավոր և միջակ անհատական տնտեսությունների կանանց, նույնպես և անցկացնել կանանց պատվիրակային ժողովներ, դնելով նրանց մեջ աշխատանքը կազմակերպելու, բոլոր աշխատանքները գործարքի փոխադրելու, արտադնացությունը կազմակերպելու գործնական հարցերը, կապելով դրանց կոլխոզի առանձին աշխատանքներում կանանց աշխատանքը մաքսիմալ կերպով ոգտագործելու հարցի հետ.

բ) հենց այդ ժողովներում և խորհրդակցություններում մշակել անհրաժեշտ պայմաններ ստեղծելու գործնական հարցեր կանանց դյուղատնտ. արտադրության մեջ ներգրավելու համար մանկական մսուրներ, հրապարակներ և այլն կազմակերպելու միջոցով, մոբիլիզացիայի յենթարկելով անհրաժեշտ միջոցներ (դրամական, բնական) հենց կոլխոզի ներսում.

գ) ապահովել սոցմրցության և սոցիալիստական աշխատանքի մյուս մեթոդների ծավալումը կին-կոլխոզնիկների մեջ նախագծված խնդիրները կատարելու վերաբերմամբ.

դ) այս միջոցառումների իրականացնելու անձնական պատասխանատվությունը դնել կուսկոմների կին-սեկտորների վարիչների վրա։

6. Ապահովել չքավորության խմբերի գործունեության ուժեղացումը համրասնդված կոլխոզներում։

Այդ նպատակով առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին անցկացնել հետևյալ միջոցառումները.

ա) սրել չքավոր խմբերի ուշադրությունը վճռական պայքարի անհրաժեշտության վրա կուլակային ագիտացիայի դեմ, վորը տարվում է գործարքի դեմ, «հավասարեցման» համար, բերքը և յեկամուտները շնչերով և այլ նշաններով բաշխելու ոգտին, վորոնք հակասում են կոլխոզային շինարարության սկզբունքներին.

բ) ապահովել աշխատանքի կազմակերպման բոլոր հարցերի և, մասնավորապես, գործարքին անցնելու (մշակման նորմաներ, աշխատանքի քանակի և վորակի հաշվառք և այլն) և արտադնացության կազմակերպման հետ կապված հարցերի նախնական քննությունը չքավորության խմբերում հետո փոխադրելով նրանց կոլխոզնիկների ժողովները.

գ) մշակել չքավորության բոլոր կոլխոզային խմբերում կոնկրետ միջոցառումներ աշխատանքի սոցիալիստական կազմակերպման մեթոդների զարգացման վերաբերմամբ կոլխոզների ներսում (սոցմրցություն, հարվածայնություն, մշակման հանդիպական նորմաներ և այլն)։

7. Առաջարկել մարզկոմներին, քաղկոմներին և ռայկոմներին ապահովել գյուղխորհուրդների ղեկավար դերը վերոհիշյալ բոլով միջոցառումներն անցկացնելու մեջ։

Այդ նպատակով՝

ա) գյուղխորհուրդների հենց մերձավոր նիստերում կոլխոզների ներկայացուցիչների մասնակցությամբ քննել կոնկրետ միջոցառումներ բոլոր կոլխոզներում գործարքն անցկացնելու վերաբերմամբ.

բ) ապահովել գյուղխորհուրդների ակտիվ ղեկավարությունը կոլխոզների արտադնացությունը կազմակերպելու և արդյունաբերական ձեռնարկությունների, նոր կառուցումների, սովխոզների և այլնի համար բանվորական ուժ հավաքելու գործում.

գ) գյուղխորհուրդների միջոցով ապահովել ամբողջ մասսայական աշխատանքի ծավալումը կոլխոզներում և այդ նպատակով խրճիթ-ընթերցարանների, ակումբների, գյուղական ժողովների և այլն ոգտագործումը.

դ) ապահովել հենց նրանց միջոցով մասսայական գրականության հասցնելը յուրաքանչյուր կոլխոզի և կոլխոզնիկի կոլխոզներում աշխատանքը և արտադնացությունը կազմակերպելու հարցերի վերաբերմամբ.

յե) ստուգել ռադիո-հաստատումներ ունեցողների դրությունը և ձեռք առնել միջոցներ նրանցից լսողների անհապաղ նորոգության վերաբերմամբ, ապահովելով ունկընդիրների առդիտորիայի կազմակերպումը գործարքի և արտադնացության մասին կատարվող ռադիո-հաղորդումների ժամանակ։

8. Մաքսիմալ կերպով ոգտագործել քաղաքային կազմակերպությունների, ֆաբրիկաների, գործարանների, նոր կառուցումների, սովխոզների և այլնի շեֆությունը կոլխոզները գործարքի փոխադրելու և արտադնացությունը կազմակերպելու գործում։

Այդ նպատակով առաջարկել ՈՍԳԴ Սովպրոֆի հետ միատեղ նախագծել գործնական միջոցառումներ ոգտագործելու գյուղը մեկնող արձակուրդավոր բանվորներին հիշյալ աշխատանքի համար։

9. Լայն ոգտագործել կինո-ագիտացիան, վորի համար՝

ա) առաջարկել Գոսկինպրոմին յերկդեկադային ժամանակամիջոցում բաց թողնել կարճ մետրաժկաներ գործարքի և արտադնացության վերաբերյալ թեմաներով։

Բաց թողնել այդ իսկ ժամանակամիջոցում նույն թեմաներով մուլտիպլիկացիաներ.

բ) գյուղական վայրերում գտնվող բոլոր շարժական-կինոներին մատակարարել ինչպես հիշյալ պատկերները, այնպես և կինո-լոզունգներ գործարքի և արտադնացության թեմաներով.

գ) ոգոստոսի 15-ից վոչ ուշ բաց թողնել կարճմետրաժ գեղարվեստական ագիտացիոն պատկեր բերքը և յեկամուտները կոլխոզներում բաժանելու թեմայով, գործարքը կոլխոզներում իրականացնելու տեսանկյունով։

10. Առաջարկել Վրաստանի Պետհրատին ապահովել մասսայական գրականության, լոզունգների, պլակատների բաց թողումը, այն է՝

ա) յերկդեկադային ժամանակամիջոցում բաց թողնել 2-ական բրոշյուր, չափով 1—1½ ֆորմայից վոչ ավելի, գործարքի և արտադնացության հարցերի վերաբերմամբ վրացերեն, ռուսերեն, հայերեն, թուրքերեն, ոսերեն, աբխազերեն և մինգրելերեն լեզուներով.

բ) հինգորյա ժամանակամիջոցում բաց թողնել լոզունգներ և թռուցիկներ գործարքի, բերքի բաշխման, աշխատանքի և արտադնացության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերմամբ նախընթաց կետում հիշված բոլոր լեզուներով։

Առաջարկել Վրաստանի Կոլխոզկենտրոնին յերեքորյա ժամանակամիջոցում հանձնել Պետհրատին լոզունգների բնագիրը և ապահովել այս բոլոր նյութերի առաքումը, տպագրելուց հետո, անմիջապես առանց բացառության Վրաստանի բոլոր կոլխոզներին, նույնպես և ռայոնական կազմակերպություններին.

գ) յերկդեկադային ժամանակամիջոցում հրատարակել մեկական գեղարվեստական պլակատ գործարքի և արտադնացության թեմաներով։

11. Առաջարկել հանրապետական և ռայոնական լրագրերի խմբագրություններին ապահովել գործարքի և արտադնացության հարցերի սիստեմատիկ լուսաբանությունը մամուլի եջերում։

Այդ նպատակով՝

ա) բացի ընդհանուր տեղեկություններ և ինֆորմացիաներ զետեղելուց կոլխոզների գործարքի փոխադրվելու ընթացքի մասին, զետեղել կարճ դիտողություններ, վորոնք կոնկրետ կերպով լուսաբանում են աշխատանքի դրվածքը և կազմակերպումն առանձին կոլխոզներում, առանձին կոլխոզների աշխատանքի պրակտիկան, գործարքի անցնելու հետևանքով ունեցած նվաճումները և դրսևորված պակասությունները ու թերությունները.

բ) նույն վոգով լուսաբանել առանձին կոլխոզներում արտադնացության կազմակերպման պրակտիկան.

գ) մաքսիմալ կերպով ոգտագործել առանձին կոլխոզները բրիգադներ ուղարկելու մեթոդը, վերջը լուսաբանելով այդ կոլխոզների պրակտիկան մամուլի եջերում.

դ) ապահովել ստորին (կոլխոզային, սովխոզային և այլն) լրագրերի խմբկոլեգիաների անմիջական ղեկավարությունը, առաջ բերելով այնպիսի դրություն, վոր ինչպես կենտրոնական, այնպես էլ ստորին մամուլը դառնան կոլխոզները գործարքի փոխադրման և արտադնացության գործնական իրականացման կազմակերպիչ։

12. Լայն ծավալել ռադիո-ագիտացիան, առաջարկել ռադիոկենտրոնին՝

ա) սիստեմատիկ կերպով ռադիոյով ժողովրդականացնել գործարքի և արտադնացության տնտեսական-քաղաքական նշանակությունը.

բ) հաղորդել ռադիոյով առանձին կոլխոզների կոնկրետ փորձն աշխատանքի կազմակերպման, գործարքի անցնելու հետևանքով արտադրական եֆեկտավորության վերաբերմամբ, նույնպես և արտադնացության կազմակերպման փորձը.

գ) ոգոստոսի 1, 15 և 25-ին անցկացնել ռայոնների առանձին խմբերի ռադիո-խորհրդակցություններ գործարքի և արտադնացության հարցերի վերաբերմամբ.

դ) սեպտեմբերի 1-ին անցկացնել կոլխոզների համավրաստանյան ռադիո կանչ այդ իսկ հարցերի վերաբերմամբ։

V

Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմը սյում է բոլոր կուսակցական, կոմյերիտական, խորհրդային, կոլխոզա-կոոպերատիվային և հասարակական կազմակերպությունների ուշադրությունը բոլոր վերոհիշյալ միջոցառումների բոլշևիկական անցկացման բացառիկ տնտեսական-քաղաքական նշանակության վրա։ Գոյություն ունեցող կոլխոզների տնտեսական ամրապնդման ամբողջ հիմքում պետք է դրվի խորհուրդների VI-րդ համագումարի մատնանշած սկզբունքը. «ով շատ և ավելի լավ է աշխատում — նա ավելի յե ստանում, ով չի աշխատում — նա վոչինչ չի ստանում»։

Կուլակությունը, վոր տեսնում է իր, վորպես դասակարգի վերացման հեռանկարը համատարած կոլլեկտիվացման բաղայի վրա, փոխելով իր քայքայիչ աշխատանքի գործելակերպը, նայելով կոնկրետ պայմաններին, ուղղում է իր բոլոր ջանքերը ներսից քայքայելու կոլխոզները, գործարքի դեմ «հավասարեցման» համար ագիտացիա մղելու միջոցով։

Աճի դժվարությունների առաջ ընկճվող աջ ոպորտունիստները, վորոնք թերագնահատում են կոլխոզային շինարարության զարգացման և գոյություն ունեցող կոլխոզների ամրապնդման նշանակությունը, հանդիսանում են դասակարգային թշնամի-կուլակության գործակալները։ «Ձախ»

963

թեքվողները, վորոնք հույս ունեն վարչական ներգործության միջոցներով իրականացնել կարևորագույն տնտեսական - քաղաքական միջոցառումները (գործարքը, արտադնացությունը), կոպիտ կերպով խեղաթյուրում են կուսակցության գլխավոր դիծը և հենց դրանով ամրապնդում աջ ոպորտունիզմի դիրքերը։ Կուսակցության գլխավոր դծից այս յերկու տեսակ թեքումների հետ հաշտվողներն ըստ եության թագցնում են աջ թեքվողներին և «ձախ» խոտորվողներին և սվաղում դասակարգային պայքարի սրման հարցը, վորի պայմաններում ընթանում է կոլխոզային շինարարության աճը։

Այս պատճառով, կոլխոզները գործարքի փոխադրելը և կոլխոզում արտադնացության կազմակերպելն իրականացնելու պրակտիկայում կուս - կազմակերպությունների մարտական խնդիրն է հանդիսանում վճռական պայքար մղել աջ թեքման, վորպես գլխավոր վտանգի, «ձախ» խոտորումների և նրանց հետ հաշտվողականության դեմ։

Յերկու ճակատով վճռական պայքարի փորձված ճանապարհով Վրաստանի կուսկազմակերպությունները պետք է արմատական բեկում առաջ բերեն կոլխոզներում գործարքը մտցնելու և արտադնացությունը կազմակերպելու գործում, նպաստելով հենց դրանով կոլխոզների ամրապնդմանը, չքավոր - միջակ մասսաների դեպի կոլխոզներն ունեցած նոր հոսանքը կազմակերպելուն, ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը բանվորական ույժով ապահովելուն և Վրաստանի գյուղական տնտեսության համատարած կոլլեկտիվացումն իրականացնելուն, վերացնելով նրա հիման վրա կուլակությանը, վորպես դասակարգի։

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍՈՒ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԱԿԻՏՄԱՍՐԱՏԻՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0210155
ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
ՀՍՍՌ ԳԱ գրադարան

ՏԱՏԵՍՄԱՐԻՖՈՒ ԳԱՄՈՒՑՈՒՄԱԼՈՒԹՅԱՆ